ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին

ՀՀ ԱԺ Նախագահ Ալեն Սիմոնյանին

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին

Եղեգնաձոր, Եղեգիս, Վայք համայնքների ավագանու անդամներին

ՈՒՂԵՐՁ

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ավագանին իր մտահոգությունն ու դիրքորոշումն է հայտնում Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի հնարավոր բացման վերաբերյալ: Մենք համոզված ենք, որ նման գործունեությունը ոչ միայն վտանգում է շրջակա միջավայրը և բնակչության առողջությունը, այլև կործանարար հետևանքներ կունենա ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ համարվող զբոսաշրջության, գինեգործության և գյուղատնտեսության զարգացման համար:

Վայոց ձորը, և հատկապես Արենին, Ջերմուկն ու Եղեգիսը, ընդգրկված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնված զբոսաշրջային կլաստերների զարգացման ծրագրում: Սա հնարավորություն է ստեղծում մեր մարզի համար դառնալ Հայաստանի այցեքարտը՝ գինու, առողջարանային, մշակութային և էկո զբոսաշրջության ուղղություններով: Զբոսաշրջությունը համարվում է տնտեսության այն ճյուղը, որը կարող է դառնալ մեր երկրի զարգացման շոգեքարշը, ինչպես բազմիցս նշում են ՀՀ կառավարության տարբեր պատասխանատու կառույցներ, ստեղծել հազարավոր աշխատատեղեր, խթանել տեղական արտադրությունը և ապահովել կայուն ու երկարաժամկետ եկամուտներ:

Վայոց ձորի մարզն արդեն իսկ ունի միջազգային ճանաչում՝ որպես գինու օրրան: Ինչպես Արենիում, այնպես էլ Վայոց ձորի տարբեր համայնքներում վերջին տարիներին կատարվել են հսկայական և մեծածավալ ներդրումներ, հիմնվել բազմահեկտար այգիներ՝ գյուղատնտեսության, զբոսաշրջության և գինեգործության զարգացումն ապահովելու համար: Այս ներդրումները ներգրավում են ոչ միայն տեղական, այլև միջազգային գործընկերներ, ստեղծում են նոր աշխատատեղեր և ապահովում գյուղատնտեսության ու զբոսաշրջության բնական կապը:

Ավելին, զբոսաշրջությունը միաժամանակ զարգացնում և բարելավում է տնտեսության մի քանի ուղղություններ միաժամանակ.

- խթանում է հյուրատնային և ծառայությունների մատուցման զարգացումը,
- նպաստում է ենթակառուցվածքների՝ ճանապարհների, կապի ու տրանսպորտի բարելավմանը,
- խթանում է գյուղատնտեսությունը՝ որպես զբոսաշրջության անմիջական մաս,
- պահպանում ու զարգացնում է շրջակա միջավայրը՝ ստեղծելով էկոտուրիզմի հնարավորություններ:

Մինչդեռ հանքարդյունաբերությունը մեր մարզում լրջագույն վտանգ է ստեղծում այս հեռանկարների համար: Ներկայում նախատեսվում է շահագործել մի շարք ծանր

մետաղական հանքեր, որոնք նախատեսում են ցիանիդի և այլ վտանգավոր նյութերի կիրառություն, ինչը կարող է անդառնալիորեն վնասել Վայոց ձորի մաքուր ջրերը, հողը և օդը: Հաշվի առնելով մեր մարզի փոքր չափերը և էկոհամակարգերի խոցելիությունը՝ ցանկացած նման աղտոտում անհնարին կդարձնի զբոսաշրջության զարգացումը:

Պարզ ասած՝ զբոսաշրջիկը չի գա մի մարզ, որտեղ բացվում են հանքեր: Ոչ մի այցելու չի ցանկանա հանգստանալ, գինի համտեսել կամ բնությունը վայելել այն տարածքում, որտեղ գործում են ցիանիդով և ծանր մետաղներով հանքեր: Սա անընդունելի է նաև Արենիի ու Վայոց ձորի բնակիչների համար, որոնց հիմնական եկամուտը գալիս է գինեգործությունից, գյուղատնտեսությունից և զբոսաշրջությունից:

Այսօր Վայոց ձորը կանգնած է ռազմավարական ընտրության առջև.

- Կամ ընտրում ենք կարճաժամկետ հանքարդյունաբերությունը՝ լրջագույն ռիսկերով բնության և մարդկանց կյանքի համար,
- Կամ՝ երկարաժամկետ ու կայուն զարգացումը՝ հիմնված զբոսաշրջության, գինեգործության և գյուղատնտեսության վրա:

Մենք համոզված ենք, որ Արենիի և Վայոց ձորի ապագան հանքերում չէ, այլ կայուն զբոսաշրջության, բարձրորակ գինեգործության և գյուղատնտեսության մեջ:

Խնդրում ենք ձեզ դադարեցնել Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի բացման գործընթացները և աջակցել այն ուղուն, որը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական զարգացման ռազմավարությանը՝ մեր երկիրը դարձնելով անվտանգ և գրավիչ զբոսաշրջային ուղղություն: Միաժամանակ ՀՀ Ազգային ժողովում քննարկման դնել օրենսդրական մակարդակով ծանր մետաղական հանքերի բացման հարցը, նախաձեռնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, որոնք կսահմանափակեն և կկանոնակարգեն հանքարդյունաբերության գործունեությունը՝ ապահովելով մեր երկրի գյուղատնտեսության, գինեգործության, զբոսաշրջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Եղեգիս, Եղեգնաձոր և Վայք համայնքների ավագանու անդամներ, խնդրում և կոչ ենք անում ձեզ ձեռնպահ մնալ աջակցելու, հաստատելու կամ թույլտվություն տալու Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի շահագործման ծրագրերին, փոխարենը չնաշխարհիկ տարածքներում մշակել այլ ծրագրեր, որոնք օգուտ կբերեն ՄԱՐԴՈՒՆ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան